

ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ Ժ—ԺԲ ԴԱՐԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Սելջուկ-թուրքական վայրագ ցեղերը ԺԱ դարի սկզբին դուրս գալով Կենտրոնական Ասիայից, արշավեցին դեպի արևմուտք, ամբողջ ճամփին գրավելով երկրներ, հասան Հայաստան և Մերձավոր Արևելյան երկրներ: Այս թուրքերից ոմանք ձեռք բերեցին նույնիսկ Բաղդադի և Կահիրեի խալիֆաթներում զինվորական կարևոր պաշտոններ և մեծ դիրքեր, այն աստիճան, որ նույնիսկ խալիֆաները կորցրել էին իրենց իսկական իշխանությունը և խաղալիք դարձել սելջուկ-թուրքերի ձեռքին:

Սրանք անգութ և թալանող մարդիկ էին, որոնք անգթորեն կողոպտեցին ոչ միայն հասարակ ժողովրդին, այլ նաև Կահիրեի արքունի մեծափարթամ պալատի անթիվ և անհամար հարստությունները (բյուրեղներ, ոսկիներ, գորգեր, զարդեր և միլիոնների արժեք ունեցող թանկագին գանձեր): Մարդկային մշակույթի պատմության մեծ վնաս պատճառելով, կողոպտվեց և առ հավետ փչացավ նաև Կահիրեի արաբական 120.000 մագաղաթյա ձեռագրերի մատենադարանը, գրքերի միջուկը վառելով, իսկ կաշյա կազմից էլ կոշիկներ կարել տալով[1]:

Երկրում տիրեց սաստիկ սովի մի շրջան, որին հետևեց մի ուժեղ երկրաշարժ, ապա տեղի ունեցավ ժանտախտի համաճարակ: Բոլոր այս աղետները շատ մեծ վնաս հասցրին Եգիպտոսի տնտեսության, որ պետք է ասել այն հասավ քայքայման դուռը: Միայն Կահիրեում մահացան հարյուր հազարից ավելի անձինք, իսկ ամբողջ երկրում՝ մի քանի հարյուր հազար շընչից ավելի: Երկրում սովն այն աստիճանի հասավ, որ մարդիկ քաղցից դըրդված և մահից վախենալով սկսեցին նույնիսկ կենդանի մարդիկ մորթել և ուտել: Կահիրեի շուկայում վաճառվում էր նույնիսկ մարդկային միս[2]: Եգիպտոսում սովը տևեց յոթ տարի: Վերջապես 1073 թվականը հանդիսացավ առատ բերքի տարի և բնակիչները նոր սկսեցին շունչ քաշել: Ժողովուրդը, խալիֆայի գլխավորությամբ, յոթ տարի գրեթե սոված էր մնացել: Նույն թվին թշնամիները սպանել տվեցին արաբ վեզիրին, որին հաջորդեցին թուրք վեզիրներ մեկը մյուսի հետևից:

---

[1] **Գ. Յովհաննէսեան,** Եգիպտոսի պատմութիւնը սկիզբէն մինչև մեր օրերը, Գահիրէ, 1937, էջ 113—115:

[2] Նույն տեղում, էջ 119:

Այս խառնակ ժամանակներում Եգիպտոսի անվանական տերը՝ խեղճացած Էլ-Մուսթանզիր խալիֆան, իր մոտ հրավիրել տվեց Աքքայից (Սիրիա) անվանի կառավարիչ Բեդր Էլ-Ջեմալի Էլ-Արմանին (հայազգի ծագումով), որ ժամանակին եղած էր արաբ իշխան Ջեմալ Էդ-Դին Իբն-Ամմարի ճորտը: Բեդր Էլ-Ջեմալին աչքի ընկավ սիրիական պատերազմի ընթացքում, երկու անգամ նշանակվեց Դամասկոսի կառավարիչ, հաջող կերպով կռվելով թուրքերի դեմ, որի հետևանքով նա հանդիսացավ Սիրիայում ամենահզոր իշխանությունն ունեցող զորավարը:

Եգիպտոսում տիրող Ֆաթիմյան արաբական հարստությունը տևեց ուղիղ երկու դար՝ 969—1171 թթ.: Այս ժամանակաշրջանում արդեն քրիստոնյա հայերի մի շարք համայնքներ կային Եգիպտոսում: Էլ-Ազիզ խալիֆայի (975—996) ժամանակվանից մեր ձեռքն է հասել հայկական մի խաչքար, որ հստակ կերպով կրում է 981 թվականը: Քարակերտ սույն խաչքարն ունի հազար տարվանից ավելի հնություն: Շրջանակում փորագրված է հայկական մի խաչ, որի չորս անկյուններում գրված է հետևյալը «ՅՍ. ՆԼ. ԹՐ. ՀՅ.», որ նշանակում է «Յիսուս ՆԼ (981) թուագրութեան հայոց»: Այս խիստ արժեքավոր խաչքարի լուսանկարը տվել են Թորգոմ Եպիսկոպոս Գուշակյան[3] և Արշակ Ալպոյաճյան[4] բանասերներն իրենց գրքերում: Ինչպես առաջին հեղինակն է նշում շատ իրավամբ[5], խաչքարերը զետեղվում էին անցյալում եկեղեցիներում կամ այլ աղոթավայրերում: Կահիրեում հայտնաբերված այդ հազարամյա քարը գալիս է ապացուցելու, որ 981 թվականին արդեն Կահիրեի հայերն ունեցել են իրենց եկեղեցին, մի բան, որ ցույց է տալիս հստակորեն, որ այդ ժամանակ նորահաստատ այդ քաղաքում եղած է կազմակերպված և բավականին հոծ հայկական մի համայնք (նվազագույնը մի քանի հարյուր հոգուց բաղկացած), որ կարիքն է զգացել ունենալու իր սեփական աղոթավայրը:

981 թ. վերոհիշյալ խաչքարից բացի, այդ երկու բանասերներն իրենց գրքում ևս տալիս են նաև մի այլ խաչքարի լուսանկարը, որ դժբախտաբար թվական չի կրում, այլ վրան գրված է միայն հետևյալ արձանագրությունը. «ՅՍ. ՔՍ. ՏՐ. ԱԾ.» (Յիսուս Քրիստոս Տէր Աստուած): Երկուսն էլ գտնում են, որ սա էլ Ժ դարի հնություն ունի հավանաբար, անշուշտ նկատի առնելով մեսրոպատառ երկաթագիր տառերի և հատկապես խաչերի շատ նմանությունը:

Այս երկրորդ հանգամանքից էլ պարզվում է մի այլ բան, այդ այն է, որ Ժ դարի վերջերին Կահիրեի հայերն ունեցել են մեկ կամ մեկից ավելի իրենց եկեղեցիները, ցույց տալով անշուշտ կազմակերպվող և աճող մի գաղթօջախի փաստացի առկայությունն Եգիպտոսի նորաստեղծ մայրաքաղաքում: Ինչպես հայտնի է, Էլ-Մոիզ խալիֆան մուտք գործելով Եգիպտոս, հին մայրաքաղաքից՝ Ֆոստատից ոչ հեռու հիմնադրեց Կահիրեն, 969 թ. հուլիսի 6-ին, այդ օրվանից դարձավ Ֆաթիմյան հարստության նոր մայրաքաղաքը: Ըստ երևույթին Ֆոստատում բնակվող հայերն էլ տեղափոխվեցին նոր քաղաքամայրը, համախմբվեցին և կարիք զգալով ազգային մի կենտրոնի և եկեղեցական հաստատության, 981 թ. հիմնեցին նորա-

---

[3] **Թ(որգոմ) Ե(եպիսկոպոս) Գ(ուշակեան)**, Եգիպտոսի հայոց հին և արդի եկեղեցիները, Գահիրէ, 1927, էջ 10:

[4] **Արշակ Ալպոյաճեան**, Արաբական Միացեալ հանրապետութեան Եգիպտոսի նահանգը և հայերը, Գահիրէ, 1960, էջ 9:

[5] **Թ. Գուշակեան**, նույն տեղում, էջ 11—12:

ստեղծ բնակավայրում իրենց անդրանիկ եկեղեցին: Ահա այդ օրվանից մինչև այսօր Կահիրեի հայերն ունեցել են իրենց մեկ կամ մեկից ավելի եկեղեցիներն անխափան կերպով, անշուշտ ենթարկվելով շատ հաճախ երկրի քաղաքական անցուդարձերի վերիվայրումներին: Եգիպտոսի թեմը միշտ ենթակա է եղած անցյալում Երուսաղեմի հայոց պատրիարքության:

Արաբ և օտարազգի գրողներն ու պատմիչները հիշատակում են հայազգի զորականների և պետական պաշտոնյաների անունները, ցույց տալով, որ շարունակաբար հայեր են ապրել Եգիպտոսում Ը—Ժ դարերում և դրանց քանակը գնալով ավելանում էր, Հայաստանից բերված գերիների հաշվին, նաև կամավոր կերպով Եգիպտոս եկող հայ առևտրականների ու արհեստավորների միջոցով, որոնք սելջուկ-թաթարների ասպատակություններից փախչելով հեռանում էին հայրենիքից և ափովում աշխարհով մեկ: Արաբ միջնադարյան պատմիչներ՝ Իբն Խալլիքանը, Իբն Խալդունն և ուրիշները, ինչպես նաև ժամանակակից հայ պատմաբաններ՝ Ա. Ալպոյաճյանը, Գ. Մըսրլյանն և ուրիշները, տալիս են բազմաթիվ հայերի անուններ, որոնք Միջնադարում ապրել և գործել են Եգիպտոսում:

Հայերի հոսանքը դեպի Եգիպտոս մեծ բնույթ է ստանում հատկապես Ֆաթիմյան խալիֆաների ժամանակ և մասնավորապես հայազգի այն վեզիրների օրով, երբ այս վերջիններն արտոնում են և մեծ դյուրություններ տալիս իրենց ազգակիցներին գալու և հաստատվելու Եգիպտոսում: Հայերի մի հոսանք Սիրիայից եկել է Կահիրե Ֆաթիմյան նշանավոր վեզիր՝ ծագումով հայազգի Բեդր Էլ-Ջեմալիի հետ 1074 թ., որպես նրա անձնագնդի անդամները: Ծովի ճամփով սիրիական նավահանգիստ Աքքայից դեպի եգիպտական Դամիեթ նավահանգիստը գալու համար Բեդրին հարկավոր է եղած հարյուր առագաստանավ: Պատմիչները գրում են, որ նա հետը բերեց իր անձնական զորագունդը, որ բաղկացած էր շուրջ 3.000 վստահելի զորականներից, որոնց մեկ մասն իսլամացած և քրիստոնյա հայեր էին: Սրանց վրա հենվելով, Բեդրը մեծ աղետից փրկեց Եգիպտոսը, միևնույն ժամանակ շուրջ մեկ դար ապահովելով Ֆաթիմյան հարստությունը կործանումից: Ասվում է նույնիսկ, որ Բեդրի հետ Եգիպտոս եկած քրիստոնյա հայ զորքերի հետ եղած է նաև հայ քրիստոնյա մի հոգևորական, անշուշտ նրանց հոգևոր ծեսերը կատարելու նպատակով:

ԺԵ դարի արժանահավատ արաբ պատմիչ Մաքրիզին գրում է, որ «Բեդր Էլ-Ջեմալին եկավ Աքքայից, սպանեց պետության ավագանին, իրեն համար բանակներ և զորախմբեր կազմեց հայերից և այդ ժամանակվանից բանակին մեծ մասը հայերից բաղկացավ», ապա մի քանի էջ հետո գրում է հետևյալը, տեղեկություն քաղելով մի ուրիշ արաբ պատմիչից՝ Իբն Աբդ Էզ-Զահիրից. «... Այժմ Հյուսեյնիյե կոչված թաղամասը բնակավայրն էր հեծյալ և հետևակ հայ զինվորներին, մի թաղամաս՝ որտեղ հավաքվում էին 7.000-ի մոտ կամ ավելի անձինք և որտեղ կային մի քանի շուկաներ»[6]:

Ահա այստեղից է, որ պատմաբան Հ. Թուրշյանն ենթադրում է, որ ծագումով հայազգի Բեդր վեզիրի «շուրջը հավաքված էր կրոնափոխ չեղած շուրջ յոթ հազար հայ զորք»[7], մի բան, որ թվում է, թե չափազանցություն պետք է լինի: Եթե Էլ-Զահիրի և Էլ-Մաքրիզիի բերած փաստը՝ որ Կահիրեի

---

[6] **Գէորգ Մըսրլեան,** Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ, 1947, էջ 28:

[7] **Հ. Թուրշյան,** XI և XIII դարերի Եգիպտահայ գաղութի պատմությունից, տես «Ա ռևելագիտական ժողովածու», II, 1964, Երևան, էջ 304:

Հյուսեյնիյե կոչված թաղամասում որպես բանակատեղի ապրում էին 7.000 վստահելի զորք, ճիշտ էր, ապա սրանք ունեին «էլ-ռումի» ծագում, այսինքն սրանց մեջ կային հայեր, բյուզանդացիներ, վրացիներ, չերքեզներ և կովկասյան այլ ազգությունների ներկայացուցիչներ: Ուրեմն չէր կարող պատահել, որ բոլորը հայեր լինեին հարյուր տոկոսով: Երկրորդ՝ Բեդրի հայազգի զորքից մի մասը քրիստոնյա էր, իսկ մնացածը իսլամացած հայեր, որով պարզվում է, որ քրիստոնյա հայ զորքի թիվը 7.000-ից շատ պակաս պետք է լիներ անկասկած: Թեպետև փաստերի բացակայության հետևանքով այժմ անկարելի է ճշգրիտ լուծել այս հարցը, սակայն պետք է ենթադրել միայն, որ Բեդրի 7.000 շնչից բաղկացած վստահելի զորագնդի մեծ մասը հայեր էին, «իր իսկ ձեռքով ընտրված զինվորներ»[8]:

Մոտավոր հաշվումներով ենթադրվում է, որ Հյուսեյնիյե թաղամասի Բեդրի զորքից մոտավորապես հազարը հայ քրիստոնյաներ էին, իսկ հազարն էլ՝ իսլամացած հայեր: Ինքը՝ Բեդր էլ-Ջեմալին, Եգիպտոսի անվանի մեծ վեզիրն ու զորապետը, թեպետև ծագումով հայ էր, սակայն կրոնով իսլամացած, որով չէր կարող իր զորքը կազմած լիներ քրիստոնյաներից միայն, այն էլ ճիշտ այն ժամանակ երբ Եվրոպայից դեպի Մերձավոր Արևելք էին շարժվում Խաչակրաց արշավանքները, որոնց հետևանքով լարված վիճակ և սուր պայքար էր առաջացել իսլամի և քրիստոնյայի միջև: Իսլամացած հայ զորքի մեջ Բեդրը գտնում էր իր ամենավստահելի տարրն ու հենարանը, իր հույսն ու ապավենը, որի վրա հենած նա կարողացավ իր երկարատև իշխանությունն ապահով կերպով տարածել սկզբում Սիրիայում, ապա շուրջ քսան տարի Եգիպտոսում: Հայազգի վեզիրի այս զորքը կրոնափոխ էր եղած կամ բռնի ուժով, և կամ արդեն մի քանի սերունդ ապրած լինելով Սիրիայում և հարևան արաբական երկրներում, քաղաքական ճնշումների հետևանքով:

Ֆրանսիացի պատմաբան Փ. դը Էնոն գրելով Բեդրի մասին ասում է, որ նա օրվա Մոստանզիր խալիֆային ապահովեց ներքին հանդարտությունը, Եգիպտոսին շնորհեց կարգ, կանոն և խաղաղություն, իսկ գյուղատնտեսության էլ ներքին և արտաքին առևտրի համար ապահովություն: Իսկ գեներալիսիմուս դառնալուց հետո էլ Բեդրը վերագրավեց Փյունիկիան (այժմու Սիրիան և Լիբանանը) և այն միացրեց Ֆաթիմյան հարստության[9]:

Հայաստանի ասպատակությունները, Անիի ավերումը, սելջուկների հրոսակային արշավանքները պատճառ դարձան, որ Հայաստանի ողջ մնացած բնակչության զգալի մասը հեռանա հայրենիքից դեպի օտար ափերը: Այսպես 1054 թ. սելջուկների երրորդ արշավանքը, որին գլխավորում էր անօրեն Տուղրիլ բեկի հրոսակային բանակը, ոտքի տակ առնելով մեր հայրենի երկիրը, ավերեց բազմաթիվ գյուղեր ու քաղաքներ: Տասը տարի հետո, սուլթան Ալփ-Արսլանի ղեկավարությամբ կատարված սելջուկյան չորրորդ արշավանքն ևս արյուն, արցունք և ավեր ափեց ամենուրեք՝ Հայաստանում, Վրաստանում և Աղվանից աշխարհում: Մոտ վեց ամսվա երկարատև պաշարումից հետո 1065 թ. օգոստոսին ընկավ մայրաքաղաք Անին անխիղճ թշնամու կրնկի տակ, ենթարկվեց կողոպուտի և ավերվեց: Ահ ու սարսափ, մահ ու ավեր տարածող սելջուկյան հաջորդական այս արշավանքները, պատճառ եղան, որ կենդանի մնացած շատ մարդիկ, ամբողջ

[8] **Գ. Սրբարեան,** նույն տեղում, էջ 28:

[9] **P. de Hénaut, Manuel** d'Histoire de l'Égypte, de Ménès à nos jours, Le Caire, 1923, p. 229.

ընտանիքներով և մեծ խմբերով, Հայաստանից հեռանան դեպի հարևան ավելի ապահով երկրներ, ի թիվս որոնց նաև դեպի Սիրիա, Եգիպտոս և արաբական այլ երկրներ, քանի որ արաբներն ավելի լավ ընդունելություն էին ցույց տալիս, քան քրիստոնյա բյուզանդացիները: Սելջուկներն «ավերում էին իրենց քաղաքներն ու գյուղերը, իսկ բնակչությանը աշխատում էին ոչնչացնել, որ երկիրը զրկվի դիմադրական ուժից»[10]: Ալպոյաճյանը գտնում էր, որ «ԺԱ դարում, իսկապես հայ ցեղը զանգվածորեն դեպի արևմուտք կշարժվեր»[11]:

Ահա սելջուկյան արշավանքներից փախչող այս գաղթական հայերից էր, որ Բեդրը հավաքում էր իր վստահելի անձնական զորագունդը: Այս գաղթականները դեռ նոր էին ժամանում արաբական այդ երկրները, որով դեռ մաքուր հայեր էին լեզվով և դավանանքով, սակայն ի խնդիր գոյության պայքարի, տղամարդիկ զինվորագրվում էին Բեդրի բանակում: Բեդրը շատ խելացի, փորձված ու խորամանկ մարդ լինելուն, լավ գիտեր իր ազգակիցների արժանիքները, հատկապես մարտունակությունն ու վստահելիությունը, որով շահագործելով նրանց նյութական անձուկ վիճակը, վերցնում էր իր բանակում, կազմելով այսպես վստահելի տարրերից բաղկացած մի զորագունդ:

Արաբագետ Գ. Մըսրլյանը գրում է, որ Բեդր Էլ-Ջեմալին խիստ բարյացակամ վերաբերում է ցույց տվել եգիպտահայ գաղութի հանդեպ, որովհետև նրա օրով բազմաթիվ հայկական վանքեր ու եկեղեցիներ են կառուցվել, անշուշտ քրիստոնյա հայ համայնքին համար: Այս ժամանակաշրջանում եգիպտահայերն ունեցել են բարգավաճ և բարօր կյանք[12]: Մաքրիզին գրում է, որ երբ Բեդրն եկել է Կահիրե, քաղաքն ունեցել է ավերակույտ: «Ուստի նա արտոնություն տվեց ասքարիներին, մելեհիներին, հայերին և շենք շինելու կարողություն ունեցողներին, որ Կահիրեում իրենց ուզած շենքը կառուցեն, օգտագործելով Մարի Ֆոստատում դատարկ մնացած այն տները, որոնց տերերը մեռած էին»[13]:

Այս հայերն այն գաղթականներն էին, որոնք նոր էին եկած հայրենիքից և զբաղվում էին այն ամեն ինչով, որ իրենց ձեռքից էր գալիս: Նրանց մեջ կային գյուղացիներ և քաղաքացիներ, վերնախավի և այլ դասակարգի պատկանողներ, առևտրականներ և արհեստավորներ, շինարարներ և նույնիսկ արվեստագետներ:

Ռուս հայտնի պատմաբան Բ. Ա. Դուրանը գրում է, որ Եգիպտոսն էլ գրավում էր հայերին, որոնք, ինչպես հայտնի էր, ԺԱ դարի վերջերին այդտեղ ունեին հայկական հայտնի գաղութ, վայելելով Բեդր Էլ-Ջեմալի հովանավորությունը: Էլ-Հաֆիզ խալիֆայի օրոք նրանք ունեին նույնիսկ իրենց պատրիարքը, որ որոշ ազդեցություն ուներ երկրի արքայի մոտ[14]: Լատին պատմաբան Եվսեբիոս Ռենոդիոսը, խոսելով Բեդրի մասին, գրում է ԺԸ դարի սկզբներին. «Իր բանակում մեծ թվով հայեր ուներ, և նրանց հնարավորությունները, ինչպես իր ազգականներինը, նա մեծապես օգտագործում

---

[10] Հայ ժողովրդի պատմություն (հեղինակային կոլեկտիվ), Առաջին մաս, Երևան, 1951, էջ 189:

[11] **Ա. Ալպոյաճեան,** Հայադաւանութեան տարածման շրջանակը, տես «Էջմիածին» ամսագիր, Երևան, 1947, մայիս-հունիս, էջ 23:

[12] **Գ. Մըսրլյան,** նույն տեղում, էջ 29:

[13] Նույն տեղում, էջ 29—30:

[14] **Հ. Թուրշյան,** նույն տեղում, էջ 303:

էր»[15]: Պատմաբան Ն. Աղազարմը, գրելով հայազգի վեզիրի մասին, ասում է, որ խալիֆան Բեդրին շնորհել է Բանակների Իշխան (Էմիր Էլ-Ջույուշ) տիտղոսը, նրան տալով երկրի քաղաքական և ֆինանսական բացարձակ և լրիվ իշխանությունը: «Բեդրը, վաճառականությունն և արվեստները ծաղկեցնելու համար հազարավոր հայ գաղթականներ հատկապես Եգիպտոս բերել տվեց: Բեդր Էլ-Ջեմալին աջակից գտնված է Եգիպտոսի մեջ հայ վանքերի և եկեղեցիների շինության և պահպանումին»[16]: Հ. Թոփուզյանն այն միտքն է հայտնել, որ հայերի հոսանքը դեպի Եգիպտոս ուժգին թափ է ստացել Ժ և ԺԱ դարերում, փախչելով Միջին Ասիական քոչվորների արշավանքներից[17]: Ֆրանսիացի ականավոր պատմաբան և արաբագետ Գաստոն Վիետը գտնում է, որ այս շրջանում (ԺԱ դարում) Եգիպտոսի պաշտպանությունը վստահված է եղել հայերին[18], ապա խոսում է այն մասին, որ Բեդրը ոչնչացնելուց հետո Քութամա ցեղի աֆրիկացիներին, թուրք և սևամորթ զորքերին, Կահիրեն ու բովանդակ երկիրը կառավարեց իր հայ զորականների միջոցով[19]:

Եվ իրոք հայերի հոսանքը դեպի Եգիպտոս մեծ բնույթ է ստանում հատկապես ֆաթիմյան խալիֆաների ժամանակ և մասնավորապես հայազգի այն վեզիրների օրով, 1074 թ. հետո, երբ այս վերջիններն արտոնում և մեծ դյուրություններ են տալիս իրենց ազգակիցներին գալու և հաստատվելու Եգիպտոսում: Այս վերջինները տեսնելով իրենց հայրենիքի՝ Հայաստանի անապահով և ոչ-խաղաղ վիճակը, տնտեսական ոչ-բորոր դրությունը, և փնտրելով այլ ապահով վայրեր, որտեղ կկարողանային ֆիզիկապես գոյությունը պահպանել և փախչել իրենց երկրում տիրող վատթար քաղաքական և տնտեսական կացությունից, անվերջ հոսանքներով թողնում ու փախչում էին Հայաստանից դեպի Եգիպտոս, Սիրիա և բազմաթիվ այլ երկրներ: ԺԱ դարի վերջում Եգիպտահայ գաղութի թիվը հասել է շուրջ 30 հազարի, որոնք ունեցել են մոտ երեսուն քրիստոնյա հայկական վանքեր և եկեղեցիներ: Ֆաթիմյանների օրով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գրիգոր Վկայասերը 1075 թ. այցելել է Եգիպտոս և մեծ պատիվներով ընդունվել երկրի խալիֆայի կողմից: Հայերի բազմացած լինելուն՝ Վկայասերն անհրաժեշտ է գտնում մի առաջնորդ նշանակել այդ գաղութի համար, որպեսզի նա առավել ևս կազմակերպի հայկական համայնքն և տիրություն անի օրից-օր աճող ու բազմացող այդ գաղութին: Վկայասերը տեսնելով հայկական գաղութի աճն և կարևորությունը, որպես առաջնորդ՝ եպիսկոպոս է ձեռնադրում իր եղբորորդուն՝ Գրիգորիսին, և ստեղծում Եգիպտոսի հայոց առաջնորդական Աթոռը, Կահիրեն լինելով աթոռանիստ քաղաք: Աղազարմն իր մի հոդվածում գտնում է, որ եգիպտական կառավարությունը հայերի առաջնորդական այդ Աթոռը ճանաչում է նախապես որպես կաթո-

---

[15] **Eusebius Renaudotius**, Historia Alexandrinorum Jacebitarum, Parisiis, MDCCXIII (1713), p. 460.

[16] **Նազարէթ Մ. Աղազարմ**, Նոթեր Եգիպտոսի հայ գաղութին վրայ, Գահիրէ, 1911, էջ 5:

[17] **Հ. Թոփուզյան**, Հայ-Եգիպտական կապեր, տես «Սովետական Հայաստան» ամսագիր, Երևան, 1959, նոյեմբեր, թիվ 11, էջ 38:

[18] **Gaston Wiet**, L'Égypte musulmane de la conquête arabe à la conquête ottomane, տեսնել Précis de l'Histoire d'Égypte. Le Caire, 1932, p. 173.

[19] Նույն տեղում, էջ 187:

ղիկոսական, իսկ ապա՝ որպես պատրիարքական Աթոռ[20]: Այդ օրվանից մինչև այսօր Եգիպտոսի կառավարությունն եգիպտահայերի առաջնորդությունը ճանաչում է որպես Պատրիարքություն, իսկ առաջնորդարանն էլ որպես պատրիարքարան (Բատրիքիյա էլ-Արման կամ Բատրիքախանա էլ-Արման՝ այսինքն Հայոց Պատրիարքություն կամ Հայոց Պատրիարքարան), տալով նրան որոշ ներքին իրավունքներ և առանձնաշնորհումներ:

ԺԱ—ԺԲ դարերի պատմիչ Մատթեոս Ուռհայեցին հետևյալն է գրում վերոհիշյալի մասին.

«Եւ էր թուականութեանն Հայոց ՇԻԳ (1075 թ.), և ապա զկնի այսորիկ գնաց Տէր Գրիգորիս ի Կոստանդնուպոլիս և անդուստ ի Հռոմ. և եկեալ յԵգիպտոս՝ շրջեցաւ ընդ անապատսն ամենայն առաջին սրբոց հարցն և կատարեաց զամենայն փափաքումն սրտին իւրոյ. և հաստատեաց անդէն իւր զաթոռ հայրապետութեանն և կանգնեալ անդէն նորոգեաց զամենայն կարգ սուրբ եկեղեցւոյ. և բազում փառք և մեծութիւն ընկալաւ Տէր Գրիգորիս ի թագաւորէն Եգիպտոսի առաւել քան ի թագաւորէն Հոռոմոց: Եւ բազում զօրք (մարդիկ է ուզում ասել—Ն. Տ. Մ.) ժողովեցան յԵգիպտոս իբրև երեսուն հազարաց. և Տէր Գրիգորիս զկնի ժամանակաց ձեռնադրեաց կաթուղիկոս զՏէր Գրիգոր՝ զքուրորդին իւր՝ և ինքն եկեալ գայր յաշխարհն Հայոց, վասն զի դեռ ևս կենդանի կայր մայրն նորա»[21]:

Ապա խոսելով 1086 թվականի մասին Ուռհայեցին գրում է հետևյալը Եգիպտոսի հայոց կաթողիկոսության վերաբերյալ.

«Աստանոր սկիզբն եղև կատարելոյ տեսլեան սրբոյն Սահակայ Պարթևի, զոր ասացն ջնջել ոսկեդիր կարգացն և գծագրել սևադեղ թանաքով. վասնզի ահա ի ժամանակս այսմիկ ի չորս բաժանեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի. զի ահա Տէր Վահրամ յԵգիպտոս, և Տէր Թէոդորոս ի Հոնին, և Տէր Բարսեղ ի թագաւորաբնակ քաղաքն Հայոց յԱնի, և Տէր Պօղոս ի Մարաշ քաղաքն. և սոքա իրաքանչիւր ոք առնէին ձեռնադրութիւնս և օծանէին եպիսկոպոսունս և տային օրհնութիւնս սուրբ ձիթոյն, և ի նոցանէ օրհնէին քահանայք, և լինէր պատարագ և մկրտութիւն և պսակն կուսանաց: Եւ էր այս ամենայն սուգ մեծ ի վերայ Եկեղեցւոյն Աստուծոյ, վասն զի մի փարախն ոչխարաց ընդ չորս հոտապետութիւնս բաժանեցաւ, և գայլք եղեն պահապանք հօտին Քրիստոսի»[22]:

Եւ մի քիչ հետո Ուռհայեցին գրում է Եգիպտոսում Հայկական կաթողիկոսական երկու Աթոռների մասին այսպէս.

«Յայսմ ժամանակիս եղև ազգիս Հայոց կաթուղիկոս վեց, երկու յԵգիպտոս, և չորս յամենայն աշխարհս Հայոց, որպէս յառաջն ասացաք»[23]:

Պատմական բուն Հայաստանից դուրս, հայկական գաղթաշխարհի ոչ մի երկրում, չի պատահել, որ բազմադարյան իր պատմության ընթացքում Հայ եկեղեցին երկու առանձին կաթողիկոսներ ունենա: Եվ ահա Ուռհայեցին այս տողերով մի առեղծված է առաջ քաշում: Կարծում ենք, որ դրանք իսկականում կաթողիկոսական Աթոռներ չէին, որովհետև դրանց ոչ կարիքը կար, և ոչ էլ անհրաժեշտություն այդ գաղութում: Հատկապես որ մյուս հայ

---

[20] **Ն. Մ. Ադազարմ,** Դարերու գերեզմանը (Ակնարկ մը Եգիպտոսի պատմութեան վրայ), տեսնել Սուրէն Պարթևեանի «Եգիպտահայ տարեցոյցը», Բ. տարի, Գահիրէ, 1915, էջ 34:

[21] **Մատթէոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 211:

[22] Նույն տեղում, էջ 229—230:

[23] Նույն տեղում, էջ 231,

պատմիչները չեն նշում այդ մասին: Ենթադրվում է, որ դրանք պարզապես առաջնորդական երկու Աթոռներ էին, որոնք արաբական իշխանության կողմից ճանաչվում էին որպես պատրիարքական Աթոռներ: Արաբներն երբ գրավեցին Եգիպտոսը, Աղեքսանդրիայում շատ վաղուց գոյություն ուներ ղպտի եկեղեցու պատրիարքական Աթոռը: Մահմեդական արաբները չհասկանալով առաջնորդական և պատրիարքական Աթոռների տարբերությունը, հայերի առաջնորդին էլ ընդունում էին որպես պատրիարք, ինչպես Եգիպտոսի բնիկ տարրի՝ ղպտիների կրոնապետին:

Սակայն ինչո՞ւ հայերը պիտի ունենային երկու առաջնորդ: Շատ հավանաբար Միջնադարում Եգիպտոսի հայկական գաղութի աճման և մեծացման պատճառով հայերը կարիք են զգացել երկու առաջնորդի (մին Կահիրեում, իսկ մյուսն էլ Աղեքսանդրիայում կամ Վերին Եգիպտոսում), և կամ մի առաջնորդի և մի հատ էլ առաջնորդական փոխանորդի, ինչպիսին է պարագան ներկայիս այդ նույն երկրում:

Գարտաշյանը տալիս է եգիպտահայերի առաջնորդների ցուցակը[24], որից վերցնում ենք առաջին երեքը, որոնք թվականի տեսակետից համընկնում են մեր ուսումնասիրության ժամանակաշրջանին, այսինքն ԺԱ—ԺԲ դարերին:

1. Գրիգորիս Արքեպիսկոպոս 1084 թվին
2. Անաստաս Արքեպիսկոպոս 1095 թվին
3. Անանիա Եպիսկոպոս 1140 թվին

Շատ պարզ է, որ վերոհիշյալ երկու դարերում եգիպտահայերն ունեցել են ոչ միայն երեք առաջնորդ, այլ և շատ ավելի, սակայն դժբախտաբար պատմական ստույգ տվյալներ չեն պահպանվել նրանց մասին, և ոչ իսկ նրանց անունները: Սակայն այն փաստը միայն, որ աղբյուրները մեզ տալիս են երկու արքեպիսկոպոսի և մի եպիսկոպոսի անունները, սա ցույց է տալիս, որ գոնե ԺԱ դարի 80-ական թվականներից մինչև ԺԲ դարի 40-ական թվականները Կահիրեում հայկական գաղթօջախը հասել է այնպիսի բարգավաճ աստիճանի և կարևորության, որ կարիք է զգացվել ունենալու եպիսկոպոսական աստիճան ունեցող հոգևոր ղեկավարների: Ինչպես նշվեց վերևում, ամենայն հավանականությամբ, վերոհիշյալ երեք եպիսկոպոսներից բացի, ԺԱ—ԺԲ դարերում, գաղթօջախն ունեցել է այլ առաջնորդներ և առաջնորդական փոխանորդներ ևս, շատ հավանաբար վարդապետի կամ քահանայի աստիճանով, որոնց մասին դժբախտաբար լռում են սկզբնաղբյուրները:

Այժմ տեսնենք, թե պատմական աղբյուրների ու արդի գրականության մեջ ի՞նչ հիշատակություններ կան այդ ժամանակաշրջանի եգիպտահայոց առաջնորդների մասին:

Աղազարմը գրում է, որ ԺԱ դարի վերջերին Գրիգոր Վկայասեր կաթողիկոսն այցելելով Եգիպտոս հատուկ եպիսկոպոս է ձեռնադրել նրանց համար[25]: Եգիպտոսի հայազգի վեզիր Բեդրը կառավարել է երկիրը 1074—1094 թթ.: Ալիշանը գտնում է, որ Վկայասերն Եգիպտոս է այցելել 1075 թ. և իր քեռորդուն՝ 'Գրիգորին եպիսկոպոս ձեռնադրել եգիպտահայերի համար 1076 թ[26]:

---

[24] **Արտաշէս Գարտաշեան,** Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար, Գահիրէ, 1943, էջ 175:

[25] **Ն. Աղազարմ,** Նոթեր Եգիպտոսի հայ գաղութին վրայ, Գահիրէ, 1911', էջ 4:

[26] **Ղ. Ալիշան,** Շնորհալի և պարագայ իր, Վենետիկ, 1873, էջ 502:

Նույն գրքում, մի այլ տեղում, հեղինակը գրում է, որ Վկայասերը նույն անձին՝ այժմ հունական Գրիգորիս անունով, Եգիպտոսի և Պաղեստինի հայերի առաջնորդ է նշանակել արքեպիսկոպոսի աստիճանով, «զոր ոմանք և՛ պատրիարք, և՛ կաթողիկոս կանվանեն»[27]: Իսկ մի քանի էջ հետո Ալիշանը հիշատակում է Աղեքսանդրիայի ղպտի պատրիարք Կյուրեղի 1086 թ. գումարած ժողովի մասին, որտեղ քննարկվել է հայերի և ղպտիների միջև եղած վեճերը դադարեցնելու հարցը: Այս ժողովին մասնակցել է հայերի առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոսը[28]:

Անգլիացի հեղինակ Բաթլերը՝ Աբու Սալիհի ձեռագրի անգլերեն թարգմանված գրքի տողատակի մի ծանոթագրության մեջ գրում է, որ Եգիպտոսի հայերի առաջին «պատրիարքը կամ կաթողիկոսը» եղել է Գրիգորիսը, որ ԺԱ դարի վերջերին ձեռնադրվել է Աղեքսանդրիայում, իր քեռու՝ Գրիգոր Բ կաթողիկոսի կողմից[29]: Անառյանը հիշում է Եգիպտոսի հայոց առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսին (հորեղբայրը Ներսես Շնորհալու), որին կաթողիկոս է օծել իր քեռին՝ Գրիգոր Վկայասերը 1074 թ.: Առաջնորդ Գրիգորիսը հանդիսացել է իր ժամանակի հայտնի մտավորականներից մեկը: 1110 թ. Եգիպտոսում թարգմանել է Ոնոփրիոսի Վարքը և Վկայասերի ու Կիրակոսի հետ կարգավորել է Ճաշոցը[30]:

ԺԷ—ԺԸ դդ. լատին պատմաբան Եվսեբիոս Ռենոդիոսը Աղեքսանդրիայի Հակոբիկյան պատրիարքների պատմության իր գրքում գրում է, որ 1117 թ. Կահիրեի ղպտի Սանհուտոս եպիսկոպոսի հուղարկավորության մասնակցել է նաև «Գրիգորիս հայոց պատրիարքը»[31]: ԺԲ դարի պատմիչ Սամվել Անեցին, խոսելով 1082 թ. մասին, Գրիգորիսին կաթողիկոս է դարձրել այսպես. «Ի ՇԼԱ թուին ... ի Դ (4) բաժանեցաւ հայոց կաթողիկոսութիւն ... տէր Գրիգորիս յԵգիպտոս...»[32]: Իսկ Մատթեոս Ուռհայեցին էլ, ինչպես գրեցինք նախորդ էջերում, նշում է, որ 1075 թ. Վկայասերը գալիս է Եգիպտոս և քրոջ որդուն՝ Տեր Գրիգորիսին ձեռնադրում կաթողիկոս:

Վերոհիշյալից երևում է, որ Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի (1066—1105 թթ.) քրոջ որդին՝ Գրիգորիս արքեպիսկոպոսը Եգիպտոսի հայոց առաջնորդ (ոմանք պատրիարք և ուրիշներ էլ կաթողիկոս են անվանում— Ն. Տ. Մ.) է ընտրվել շատ հավանաբար 1075 թ. և այդ պաշտոնի վրա է մնացել գոնե մինչև 1117 թ., եթե ոչ ավելի, ուրեմն 42 տարուց ավելի մի ժամանակաշրջան:

Պատմական աղբյուրները նշում են, որ Բեդրի հետո Եգիպտոս է ժամանել մի հայ հոգևորական արդյոք նա Գրիգորի՞ան է եղած, թե ոչ մի այլ անձ: Պարզ չէ: Աղբյուրները լռում են այս մասին: Մաքրիզին սակայն տալիս է մի այլ տեղեկություն Գրիգորիսի մասին: Այս վերջնույս եղբայրը՝ Վահրամ Պահլավունին հետագայում դառնում է Եգիպտոսի վեզիր (1135—1137 թթ.): Սրա մրցակից Ռադվան Բին Վալախշին երբ բռնագրավում է

---

[27] Նույն տեղում, էջ 162:

[28] Նույն տեղում, էջ 169:

[29] The Churches and monasteries of Egypt and some neighbouring countries, attributed to Abu Salih, the Armenian, Oxford, 1895, p. 3.

[30] **Հ. Անառյան,** Հայոց անձնանունների բառարան, հատոր Ա, Երևան, 1942, էջ 555:

[31] **Eusebius Renaudotius,** Historia Patriarcherum..., p. 491.

[32] **Սամուէլ քահանայի Անեցւոյ,** Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 118:

վեզիրության պաշտոնն և Վահրամ ստիպված փախչում է Վերին Եգիպտոս, մոլեռանդ ամբոխը սրբապղծելով Կահիրեում թաղված Գրիգորիս Արքեպիսկոպոսի գերեզմանը քարուքանդ է անում այն[33]։

Եգիպտահայերի առաջնորդական ցուցակի երկրորդ անձը, որ հիշում է Գարեգին Բ-ն, դա Անանուն արքեպիսկոպոսն է 1095 թվին։ Ցավոք սրտի մեր ձեռքի տակ եղած աղբյուրներից և ոչ մեկը չի հիշում այս անունով մի անձնավորություն, որպես առաջնորդ։ Ավելին, ինչպես վերևում գրեցինք, առաջին առաջնորդ Գրիգորիսի գործունեությունը Եգիպտոսում ընդգրկում է շուրջ 1075—1117 թթ. ժամանակաշրջանը, որով 1095 թվականին չէր կարող մի ուրիշ առաջնորդ լինել հայերի համար։ Գրիգորիսի ընտավայրն եղել է երկրի մայրաքաղաք՝ Կահիրեն, որտեղ նա գործել, մահացել և թաղվել է։ Ծայրահեղ դեպքում, եթե նույնիսկ 1095 թ. իրոք Եգիպտոսում եղել է ոմն Անանուն արքեպիսկոպոս, ապա մենք հակված ենք նրան որոնելու Կահիրեից դուրս մի այլ քաղաքում, ասենք Աղեքսանդրիայում, Թեբեում, Իթֆիհում և այլն, որտեղ պետք է լինեին բավականին հոծ հայկական համայնքներ։ Որով Անանուսի անունը մենք դնում ենք առաջնորդական ցուցակում պայմանական կերպով։

Սրանից ավելի հետաքրքիր մի այլ հարց կա, որ պատկանում է նույն ժամանակաշրջանին, և որ արտահայտիչն է այդ խառն և դժբախտ ժամանակների։ Մատթեոս Ռոհայեցին գտնում է, որ Գրիգորիս Բ Վկայասերի ժամանակ հայերն ունեին չորս կաթողիկոս՝ Վահրամն Եգիպտոսում, Թեոդորոսը Հոնիում, Բարսեղն և Պողոսը Մարաշում[34]։ Սամվել Անեցին 1082 թ. ընթացքում հիշում է հինգ կաթողիկոսի անունները, այսպես «Տէր Վահրամ, Տէր Գրիգորիս յԵգիպտոս» և մնացեալ երեքը՝ Բարսեղ, Պօղոս և Թորոս կաթողիկոսները[35]։ Օրմանյան ավելի մանրամասն խոսելով իրական այս թվջուկի մասին, թվում է ո՛չ ավելի և ո՛չ պակաս հայազգի ութ կաթողիկոսներ, որոնք միևնույն ժամանակ գործել են Հայաստան աշխարհի և հայ ափյուռքի զանազան մասերում[36], ԺԱ դարի վերջերին։ Վերևում հիշվածներից բացի նշում է նաև Գևորգը Տարոնում, Ստեփանոսը՝ Աղվանքում և մի անանուն կաթողիկոս ևս Աղթամարում։

Այս բոլորը թվարկելու նպատակն եղել է այն, որ ցանկացել ենք ճշտել Ռոհայեցու այս հաշիվը. «Յայսմ ժամանակիս եղև ազգիս հայոց կաթուղիկոս վեց, երկու յԵգիպտոս, և չորս յամենայն աշխարհս հայոց, որպես յառաջն ասացաք»[37]։ Եգիպտոսում գտնվող երկու եպիսկոպոսներն են Գրիգոր Բ Վկայասերն և Գրիգորիս արքեպիսկոպոսը (ըստ ոմանց պատրիարք և ըստ այլոց կաթողիկոս)։ Անեցին նշում է «Վահրամ և Գրիգորիս», ինչպես տեսանք քիչ վերևում։ Վահրամն ու Գրիգոր Վկայասերը նույն անձերն են։ Այս մասին պարզորոշ կերպով խոսում է Գանձակեցին այսպես. «Նպա աշխարհս հայոց ժողովեալ ի մի վայր, կացուցանեն յԱթոռն հայրապետական զտէր Վահրամ, զոր անուանեցին Գրիգորիս, զորդին Գրիգորի Մագիստրոսի, ի քաղաքէն Բջնոյ», զթոռն Վասակայ մարտիրոսի, զայր իմաստուն և առաքինի»[38]։

---

[33] **Գ. Մրպրեան,** Անկանոն հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ, 1947, էջ 67։
[34] **Մատթէոս Ռոհայեցի,** նույն տեղում, էջ 229։
[35] **Սամուէլ Անեցի,** նույն տեղում, էջ 118։
[36] **Մ. Օրմանեան,** Ազգապատում, հատոր Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 1311—2։
[37] **Մատթէոս Ռոհայեցի,** նույն տեղում, էջ 229։
[38] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 95։

Այս կետը վերջացնելուց առաջ պետք է ճշել մի հանգամանք ևս, որ նույն ժամանակում գործող և գոյություն ունեցող եկեղեցական իշխանավորները, որոնց ոմանց կողմից նույնիսկ կրել են կաթողիկոսի աստիճանը, եղել են աթոռակից կամ հակաթոռ անձեր։ Այսպես, Սարգիս (1076—7), Թեոդորոս (1077—90) և Պողոս (1085—9) կաթողիկոսներն եղել են հակաթոռ, իսկ Գևորգ (1069—72) և Բարսեղ (1085—1105) կաթողիկոսներն եղել են աթոռակից։ Նույնիսկ այս վերջինը՝ Բարսեղ Ա Անեցին ամենայն հայոց իսկական կաթողիկոսի՝ Գրիգոր Բ Վկայասերի վախճանումից հետո ընտրվել է պաշտոնական կաթողիկոս և գահակալել 1105—1113 թթ.[39]։

Եվսեբիոս Ռենոդիոսն իր արժեքավոր լատիներեն գրքում, 505-րդ էջում, խոսում է վերոհիշյալ Գրիգորիս արքեպիսկոպոսի (Վահրամ Պահլավունու եղբոր) մասին, իսկ 509-րդ էջում խոսում է մի այլ Գրիգոր պատրիարքի վերաբերյալ, որի մասին ունի հետևյալ դարձվածքը. «Եգիպտոսում մեռած **միւս Գրիգորի** (ընդգծումը մերն է—Ն. Տ. Մ.) մահից յետոյ, երբ Վահրամ (Պահլավունի վեզիրը—Ն. Տ. Մ.) եղբօր (Վասակ Պահլավունի, Թեբեի կառավարիչ—Ն. Տ. Մ.) քով եկած էր, ընտրեցին Անանիան, որ ապաւնեց բազմաթիւ հայ վանականների հետ, երբ Ռոդոլան (Վահրամ Պահլավունու հաջորդող Եգիպտոսի դեկավարը) գրաւեց վեզիրի պաշտօնը»[40]։

Վահրամ Պահլավունին վեզիրի իր պաշտոնից հրաժարվեց 1137 թ. և իրեն հաջորդեց Ռիդվան (=Ռոդոլան)։ Ըստ Ռենոդիոսի այս **«միւս Գրիգոր»** եպիսկոպոսը պետք է մահացած լիներ 1137 թվականից առաջ։ Որով մեզ թվում է, թե այս Գրիգորը չէր կարող նախորդ Գրիգորիս Արքեպս. լինել, քանի որ գրեթե անհավանական էր 1075-ին եգիպտահայերի առաջնորդ նշանակված և եպիսկոպոս ձեռնադրված անձնավորությունը պաշտոնավարեր շուրջ 62 տարի, որպես եպիսկոպոս։ Անցյալում եպիսկոպոս էին ձեռնադրում, երբ ենթական դառնում էր հասուն մարդ, նվազագույնը 35—40 տարեկանին, շատ անգամ նույնիսկ շատ ավելի տարեցներին։ Որով մենք հակված ենք մտածելու մի ուրիշ Գրիգոր եպիսկոպոսի մասին, որ եգիպտահայոց առաջնորդ է եղել և որ հաջորդել է անշուշտ նախորդ Գրիգորիս Արքեպս. Պահլավունուն։

Ցավոք սրտի պատմական աղբյուրները չեն տալիս այլ մանրամասնություններ, որպեսզի կարողանայինք ճշտել այս պարագան։ Ընդհակառակը, աղբյուրների պակասի հետևանքով, որոշ շփոթություն է առաջացել մի քանի պատմաբանների և բանասերների մոտ, անշուշտ ավելի բարդացնելով տվյալ հարցի բարվոք լուծումը։ Այսպես օրինակի համար Ղ. Ալիշանը գտնում է, որ Գրիգոր Պահլավունուց հետո նրան է հաջորդել Անանիա եպիսկոպոսն որպես առաջնորդ[41]։ Անանիան առաջնորդ է եղել 1137 թ., որով Գրիգորիսի առաջնորդությունը 1075 թվականից բերել և հասցնել մինչև 1137 թ., այսինքն 62 տարի, դա արդեն անբնական և անհավանական է տրամաբանորեն, քանի որ մի զառամյալ ծերունի՝ 90—100 տարեկան հասակով չէր կարող առաջնորդի պատասխանատու պաշտոնը վարել։

Եգիպտահայոց առաջնորդների ցուցակում, ժամանակագրական կարգով, գալիս է Անանիա եպիսկոպոսը, որին «արքեպիսկոպոս կամ պատ-

---

[39] Տես Զեղարձակ օրագոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1909, էջ 277։
[40] **Eusebius Renaudotius**, Historia Patriarcharum..., pp. 505 et 509.
[41] **Ղևոնդ Ալիշան**, Ծնորհալի և պարագայ իր, Վենետիկ, 1873, էջ 165։

պիարք» աստիճանն է տալիս Անանյանը»[42], գրելով, որ նա հաջորդել է եգիպտահայ առաջին պատրիարքին՝ Գրիգորին (պետք է լինի երկրորդ Գրիգորը—Ն. Տ. Մ.) և նստել Զահիր կամ Զահիրատ կոչվող վայրում գտնվող հայկական վանքում: 1137 թ. հայերի դեմ ապստամբություն ծագած լինելով արաբները գրավել են հայոց վանքը, սպանել բոլոր հոգևորականներին, որոնց թվում նաև Անանիա եպիսկոպոսին:

Գարտաշյանն Անանիային տեղադրում է 1140 թվականին, իսկ Անանյանը՝ 1137-ին: Այս վերջնույն թվականն ավելի ճշգրիտ է, տրված լինելով, որ Եգիպտոսի 1135—37 թթ. հայազգի վեզիր Վահրամ Պահլավունու 1137 թ. Կահիրեից Վերին Եգիպտոս փախուստից հետո նոր վեզիրը հալածանք սկսեց հայերի դեմ և ապստամբ արաբները հարձակվելով Զահիրատի հայոց վանքի վրա ավերեցին այն, սպանելով Անանիա պատրիարքին և բոլոր հոգևորականներին: Նույն փաստի մասին խոսում է նաև Ալիշանը[43]:

Անանիայից հետո եկող եգիպտահայոց առաջնորդի անունը դժբախտաբար չեն տալիս աղբյուրները: Ալիշանը գրում է, որ «այս ատենի հայոց եպիսկոպոսին՝ զոր նա (Աբու Սալիհ պատմիչը—Ն. Տ. Մ.) պատրիարք կկոչե, հայտնի չէ անունն. անկե առաջ մեզ ծանոթ եպիսկոպոսն է Անանիա, 30 տարի առաջ վախճանած»[44]: Բարեբախտաբար բավականին մանրամասն տեղեկություններ է մեզ հասել այս պատրիարքի մասին. որ հանդիսացել է ֆաթիմյան շրջանի եգիպտահայոց վերջին առաջնորդը:

Տեղեկություն տվող պատմիչն արաբերեն գրող հայազգի ժամանակակից և ականատես Աբու Սալիհն է, որ շատ արժեքավոր մանրամասնություններ է տալիս այս պատրիարքի, ԺԱ—ԺԲ դդ. եգիպտահայ վեզիրների, հայոց եկեղեցիների և վանքերի մասին: Նա գրում է, որ այս պատրիարքը նախապես եղել է Իթֆիհի[45] եպիսկոպոսը, որտեղ հայերն ունեին Ս. Գևորգ անունով մի եկեղեցի և անկասկած հայկական մի հոծ համայնք: Կահիրեից բավական հեռու լինելուն, երևի արաբ ապստամբները ձեռք չեն բարձրացրել այս եպիսկոպոսի վրա, որով նա կենդանի է մնացել: Անանիայի սպանությունից հետո, Էլ-Հաֆիզ (1131—1149) խալիֆայի օրով, խորամանկություն գործադրելով և կաշառք տալով նա դարձավ եգիպտահայերի պատրիարքը: Հետագայում նա այնքան մտերմացավ օրվա խալիֆային, որ այս վերջինս արտոնեց նրան արքայական իր պալատը գալու շաբաթվա մեջ երեք օր, երկուշաբթի, հինգշաբթի և ուրբաթ, ինչպես նաև տոնական այլ օրերին, խալիֆային պատմելու համար ամեն ինչի մասին: Երևում է, որ հայոց պատրիարքը բազմակողմանի զարգացում ունեցող մարդ է եղել: Նա դարձել էր մի տեսակ խալիֆայի անպաշտոն խորհրդատուն: Աբու Սալիհը գրում է, որ հայոց այս պատրիարքը Զմրուխտի պալատում Էլ-Հաֆիզին պատմում էր անցյալի պատերազմների, երևելի մարդկանց կենսագրության, նախկին արքաների տարեգրության, պատմության և այլ նյութերի մասին: Պարզ է, որ խալիֆան հայերեն չգիտեր: Պատրիար-

[42] **Հ. Անանյան,** Հայոց անձնանունների բառարան, հատոր Ա., Երևան 1942, էջ 153:

[43] **Ղ. Ալիշան,** Շնորհալի և պատրագայ իր, Վենետիկ, 1873, էջ 165:

[44] **Ապուսահլ հայ,** Պատմութիւն եկեղեցեաց և վանօրէից Եգիպտոսի, Վենետիկ, 1895, էջ 19:

[45] Կերկեսիս կոչվում է Աթֆիհ, մի աննշան գյուղ, որ գտնվում է Կահիրեի հարավային կողմը, Նեղոս գետի արևելյան ափին: Ժամանակին, ֆաթիմյան շրջանին, դա եղել է մի մեծ ավան, Իթֆիհ անունով, որին հույները Աֆրոդիտոպոլիս են կոչել:

քը պետք է լավ արաբերեն իմացած լիներ, որպեսզի կարողանար անձամբ շփում ունենալ Էլ-Հաֆիզի և նրա պալատականների հետ, որոնք հարգում էին հայոց պատրիարքին:

Հայազգի պատմիչը գրում է, որ պատրիարքին պալատ կատարած կանոնավոր այցելությունները շարունակվեցին մինչև Էլ-Հաֆիզի մահը, որ տեղի ունեցավ Հիջրայի 544 թվականի Ջումադայի երկրորդ ամիսը (1149 թ.): Այս պատրիարքը դեռ շատ երկար հովվել է իր հոտը, և իբր հետևանք Եգիպտոսի քաղաքական վերիվայրումներին, և հատկապես ֆաթիմյան հարստության անկման (1171 թ.) ու ղուզզերի և քրդերի կողմից հայերին պատճառված մեծ ավերներին ու հալածանքներին, որոնք տեղի ունեցան Հիջրայի 564 թվականի Ռաբիի երկրորդ ամսում (1168—9 թթ.), պատրիարքն իր հետ առնելով հայերեն կրոնական 75 ձեռագրերի իր հավաքածուն, իր հետևորդներով 1172 թ. Կահիրեից մեկնել է Պաղեստին, վերջնականապես հաստատվելով Երուսաղեմում: Կահիրեից մեկնելուց առաջ նա իրեն փոխանորդ է նշանակել մի քահանայի, որպեսզի իր որդու հետ՝ որպես տիրացուի, Կահիրեի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում[46] պատարագ մատուցեր և ծիսակատարություններ կատարեր տեղի նոսրացած հայ գաղթօջախի համար: Պատմիչը գրում է, որ եգիպտահայոց այս պատրիարքը հետագայում Երուսաղեմ քաղաքից դուրս մի վանք է կառուցել տվել և մեջն էլ մի եկեղեցի Ս. Սարգիս անունով, որտեղ նա ունեցել է քսան վանականներ և այնտեղ ապրել մինչև իր կյանքի վերջը: Ասվում է, որ նա ապրել է մինչև խոր ծերություն և մահացել շուրջ 80 տարեկան հասակում: Բոլոր այս մանրամասն տեղեկությունները մեզ հայտնում է ժամանակակից պատմիչ Աբու Սալիհը, իր գրած արաբերեն գրքում: Այս վերջինիս գրածներն անգլերենի է թարգմանել Էվեցը[47], իսկ հայերենի՝ Ղ. Ալիշանն[48] և Գ. Մըսրլյանը[49]: Սրանցից բացի այս պատրիարքի վրա շատ և քիչ չափով կանգ են առել Եվսեբիոս Ռենոդիոսը[50], Հ. Սուֆյանը[51] և այլ բազմաթիվ հայ և օտարազգի պատմաբաններ և բանասերներ:

Այլևս կարիք չկա ավելի երկար համեմատելու այս պատրիարքի անձնավորության վրա, սակայն հարկավոր է տալ Աբու Սալիհ պատմիչի այն 23 տողերը, որոնք չեն թարգմանված ցարդ ոչ անգլերենի, և ոչ էլ հայերենի: Այս 23 տողի պարունակությունը վերաբերում է հենց նույն ինքն այս անանուն պատրիարքին, որի մասին խոսվեց վերևում:

Աբու Սալիհի արաբերեն ձեռագրի պահպանված միակ օրինակը ներկայիս գտնվում է Փարիզի Ազգային մատենադարանում 307 համարի տակ: Դրա 3Բ թերթի վերջին տողից, ներառյալ ամբողջ 4Ա թերթը, մինչև 4Բ թերթի հինգերորդը չի թարգմանված արաբերենից այլ լեզվի: Հակառակ որոշ մարդկանց վերապահության, մենք գտնում ենք, որ պատմության

[46] Հայկական այս եկեղեցին գտնվում էր Հարեթ Էլ-Ջուելա թաղամասում գտնվող Ա. Բիծ Տիրամոր անվան նվիրված ղպտիների եկեղեցու երկրորդ հարկում:

[47] B. T. A. Evetts, The Churches & Monasteries..., pp. 3—7.

[48] Ապուսահլ հայ, Պատմութիւն եկեղեցեաց և վանօրէից Եգիպտոսի, Վենետիկ 1895, էջ 21—29:

[49] Գ. Մըսրլեան, Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ, 1947, էջ 152—4:

[50] Eusebius Renaudotius, Historia Patriarcharum Alexandrinorum Jacobitarum, Parissis, MDCCXIII (1713), pp. 505—509.

[51] Հ. Սուֆեան, Եգիպտոսի հայ մեմլուքներն ու իշխանները ֆաթիմեան շրջանին, Գահիրէ, 1929, 73—80:

համար անհրաժեշտ է թարգմանել վերոհիշյալ 23 տողերը, որոնք կարող են առավել ևս լուսաբանել տվյալ ժամանակաշրջանի եգիպտահայ գաղութի մթում մնացած պատմության որոշ խնդիրները:

Ահա այս պարբերությունը.

(այս պարբերության առաջին մասը չի տրվելու այստեղ որոշ հանգամանքների պատճառով)

«..... Նա (խալիֆան—Ն. Տ. Մ.) նրա (պատրիարքին—Ն. Տ. Մ.) մոտ ուղարկեց մի հայտնի պրոֆեսոր (բժիշկ—Ն. Տ. Մ.) իրեն ծառայողներից, որին նա վստահել էր փողի գանձերը, և նա (բժիշկը—Ն. Տ. Մ.) արժանահավատ (մարդ—Ն. Տ. Մ.) էր բացահայտելու նրան (խալիֆային—Ն. Տ. Մ.) այդ (պարագան—Ն. Տ. Մ.): Նա չէր կարող (այդ անելուց—Ն. Տ. Մ.) խուսափել: Նա (բժիշկը —Ն. Տ. Մ.) նրան (խալիֆային—Ն. Տ. Մ.) հայտնեց այս պարագայի մասին և վերացվեց կասկածանքը, և բացահայտվեց նրա (պատրիարքի—Ն. Տ. Մ.) անմեղությունը, և այն, ինչ որ խոսվում էր նրա մասին, սուտ էր»: (Այս խոսակցությունը տեղի ունեցավ Սիրիա (այսինքն Երուսաղեմ—Ն. Տ. Մ.) գնալուց և այնտեղ իր մահկանացուն կնքելուց հետո... և այլն)[52]:

Իթֆիհի այս անանուն եպիսկոպոսը եգիպտահայերի առաջնորդ ընտրվեց ղպտիների Գաբրիել Բ պատրիարքի (1131—45 թթ.) օրով, ինչպես վկայում է Աբու Սալիհ, և նախորդ առաջնորդ Անանիա եպիսկոպոսի մահից (1137 թ.) հետո անկասկած, որով նրա առաջնորդության սկիզբ պետք է լինի 1137 և 1145 թվականների միջև: Որով նա եգիպտահայերի առաջնորդ է եղել շուրջ 27—35 տարի, որից հետո նա Երուսաղեմ է մեկնել և վախճանվել այնտեղ:

Վերոհիշյալից պարզվում է, որ ԺԱ—ԺԲ դարերի համար մենք կարող ենք վերականգնել եգիպտահայոց առաջնորդների ցուցակը հետևյալ ձևով.

Ա. Գրիգորիս Արքեպիսկոպոս	1076—1117
Բ. Անաստաս Արքեպիսկոպոս	1095—. . .
Գ. Գրիգոր Եպիսկոպոս	. . . .
Դ. Անանիա Եպիսկոպոս	+1137
Ե. (Իթֆիհի) Եպիսկոպոս	1137/45—1172:

Քննելով թվականները վերոհիշյալ հինգ եպիսկոպոս-արքեպիսկոպոսների, տեսնում ենք, որ ֆաթիմյան շրջանի երկրորդ հարյուրամյակում, երբ ծագումով հայազգի վեզիրներն իրենց ձեռքն էին վերցրել Եգիպտոսի ղեկավարման պատասխանատու և դժվարին պաշտոնը, որպես գլխավոր վեզիր (վարչապետ, նախարարապետ), եգիպտահայ գաղութն այնքան աճեց ու բազմացավ, որ անհրաժեշտ կարիքն զգացվեց ունենալու գաղթավայրի ղեկավար առաջնորդներ, եպիսկոպոսի բարձրագույն աստիճանով: Այս անձնավորությունները, թեպետև հոգևոր ղեկավարներ և իշխանավորներ էին, սակայն միևնույն ժամանակ հայկական գաղթավայրն ու նրա շահերը

---

[52] Պատմութիւն Էլ-Շէյխ Ապու Սալիհ Էլ-Ալմանիի, որ պարունակում է մի տեղեկագիր Եգիպտոսի նահանգների և աւատների մասին (արաբերէն ձեռագիր բնագրից) թ.թ. 3Բ—4Բ: Այս մասին տեսնել նաև մեր հոդվածը «ԺԲ—ԺԳ դարերի հայազգի պատմիչ Աբու Սալիհը և նրա անհայտ երկու էջերը», «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1969, թիվ 3, էջ 191—204:



ԽԱՉՔԱՐ 981 թ.

ԽԱՉՔԱՐ 981 թ.

ԽԱՉՔԱՐ ԹՎ. ԱՆՀԱՅՏ



ԽԱՉՔԱՐ 17 ՐԴ ԴԱՐ

ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՐՄՆԱՆԿԱԼԸ 12-ՐԴ ԴԱՐԻ
ՍՊԻՏԱԿ ՎԱՆՔՈՒՄ (ՎԵՐԻՆ ԵԳԻՊՏՈՍ)



ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՐՄՆԱՆԿԱՐ 12-ՐԴ ԴԱՐԻ ՍՊԻՏԱԿ ՎԱՆՔՈՒՄ (ՎԵՐԻՆ ԵԳԻՊՏՈՍ)

ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՐՄՆԱՆԿԱՐ 12-ՐԴ ԴԱՐԻ
ՍՊԻՏԱԿ ՎԱՆՔՈՒՄ (ՎԵՐԻՆ ԵԳԻՊՏՈՍ)



12-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԻ ԴՈՒՌԸ
(ՍՊԻՏԱԿ ՎԱՆՔ)



ԳՏՉԱՆ ՎԱՆՔ

(տես էջ 70—77)

ներկայացնում էին արաբական այդ երկրի քաղաքական-պետական մարմինների առաջ: Այսպես, օրինակի համար երբ ամեն անգամ որևէ պարզ կամ բարդ հարց էր առաջանում հայկական գաղթավայրի (վանք, եկեղեցի, դըպրոց, գերեզմանատուն, հայերի անձնական ապահովություն, ժառանգություն, կտակ և այլն) առաջնորդը դիմում էր պետական մարմիններին այդ հարցը բարվոք կերպով լուծելու համար: Որով գաղութի առաջնորդն ուներ և՛ հոգևոր, և՛ քաղաքական ղեկավարի կրկնակ պատասխանատու պաշտոնները:

(Շարունակելի)